ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«03» Փետրվարի 2015 թվականի N 01-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մասիսի քաղաքային համայնքի 2014թ. համախմբված բյուջեի մուտքերի առաջադրանքը կատարվել է 103,66 %-ով, նախատեսված 574761,7 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 595818,0 հազ. դրամ:

2014թ. վարչական բյուջեի մուտքերի առաջադրանքը կատարվել է 100,6 %-ով, նախատեսված 440382,6 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 443282,2 հազ. դրամ:

2014թ. ֆոնդային բյուջեի եկամուտների տարեկան առաջադրանքը կատարվել է 113,5%-ով, նախատեսված 134379,1 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 152535,8 հազ. դրամ:

2014թ. հարկային եկամուտների առաջադրանքը կատարվել է 105,4 %-ով, այդ թվում հողի հարկի առաջադրանքը կատարվել է 102,0%-ով, գույքահարկի առաջադրանքը 92,9%-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը կատարվել է 94,9%-ով, նախատեսված 7798,5 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 7405,3 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքերի առաջադրանքը կատարվել է 93,6 %-ով, նախատեսված 12600,0 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 11801,9 հազ. դրամ:

Այլ եկամուտների առաջադրանքը կատարվել է 92,9 %-ով, նախատեսված 37233,7 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 34601,9 հազ. դրամ: Թերակատարման հիմնական ուղղություններն են վարչական իրավախախտումների պատժամիջոցներից (կատարման %-ը 9,1), տեղական վճարներ (կատարման %-ը 86,7) և այլն:

2014թ. վարչական բյուջեի մուտքերը առանց պատվիրակված լիազորությունների, դոտացիայի և սուբվենցիայի կատարվել է 102,1 %-ով, նախատեսված 135756,0 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 138655,6 հազ. դրամ:

2014թ. ֆոնդային բյուջեի մուտքերի առաջադրանքը կատարվել է 113,5 %-ով, նախատեսված 134379,1 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 152535,8 հազ. դրամ: Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքերի առաջադրանքը կատարվել է ամբողջությամբ:

2014թ. վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 97,8 %-ով, նախատեսված 440382,6 հազ. դրամի դիմաց, փաստացի ծախսերը կազմել են 432723,9 հազ. դրամ:

2014թ. ֆոնդային բյուջեի նախատեսված ծախսերը կատարվել են ամբողջությամբ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69 հոդվածի , <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Մասիս քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, եկամուտների գծով 595818,0 հազ. դրամ, ծախսերի գծով 559262,0 հազ. դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

			ԿՈՂՄ ( )	ԴԵՄ ( )	ՁԵՌՆՊԱՀ ( )
1.	Պապիկ	Արգարյան			
2.	Վաչագան	Արգարյան			
3.	Հրաչ	Ավետյան			
4.	Նվեր	Գաբրիելյան			
5.	Անդրանիկ	Գևորգյան			
6.	Գևորգ	Գևորգյան			
7.	Սուրեն	Զախարյան			
8.	Հակոբ	Խուդիկյան			
9.	Նորայր	Հակոբյան			
10.	Աբրահամ	Շահվերդյան			
11.	Գարիկ	Սավադյան			
12.	Գևորգ	Ստեփանյան			
13.	Էդմոնդ	Ստեփանյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՀԱԿՈԲՅԱՆ

2015 թ. փետրվարի 03
ք. ՄԱՍԻՍ